ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.01.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/198

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 23.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2019թ. թիվ 26/26-1/20766-2019 գրությամբ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.12.2019թ. թիվ ՊՆ/02/2833-2019 գրության հիման վրա, 13.12.2019թ. թիվ 26/26-1/20766-2019 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանի 4.3 կետի համաձայն՝ ընթացակարգի քննությունը սկսվել է սկզբից:

2. <u>Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը Ընթացակարգի 14, 15, 16, 17 և 21-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Նույն արձանագրության 1.4 կետի համաձայն՝ առաջարկվել է ծանուցել Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին, որպեսզի վերջինս ներկայացնի Ընթացակարգի հրավերով սահմանված 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի կողմից Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին 26.11.2019թ. ուղարկված ծանուցմամբ առաջարկվել է ներկայացնել Ընթացակարգի հրավերով սահմանված 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ի պատասխան 26.11.2019թ. ստացված ծանուցման՝ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը 28.11.2019թ. գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Թազայանի էլեկտրոնային փոստին՝ l.tazayan@mil.am հասցեին է ուղարկել Ընթացակարգի հրավերով սահմանված 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն. «Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի

3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել: Ելնելով վերոգրյալից 02.12.2019թ. գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և ծանուցել Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին ուղարկված ծանուցմամբ հայտնվել է հետևյալը՝ «Հարգելի գործընկեր, հայտնում ենք Ձեզ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը Ձեր կողմից չեն ներկայացվել: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը՝ նշված փաստաթղթերը ուղարկելով սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Թազայանի էլեկտրոնային փոստին՝ l.tazayan@mil.am հասցեով»:

09.12.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց հետևյալը. «Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից սահմանված ժամկետում ներկայացվեցին որակավորման փաստաթղթերը հանձնաժողովն արձանագրեց, որ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում կրկին առկա են անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը»:

Մասնակիցը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 7-րդ հոդվածի 1-ին մաս, 34-րդ հոդվածի 5-րդ մասը և 6-րդ մասերը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետը, 47-րդ կետը, 48-րդ կետը:

Այսպիսով, Ընթացակարգի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը:

Գնահատող հանձնաժողովը 26.11.2019թ. ծանուցել է Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին, որպեսզի վերջինս ներկայացնի Ընթացակարգի հրավերով սահմանված 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

28.11.2019թ. Ընկերության կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել է Ընթացակարգի հրավերով սահմանված 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն անհասկանալիորեն արձանագրվել է, որ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:

02.12.2019թ. գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

04.12.2019թ. Ընկերության կողմից նույնպես սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են 28.11.2019թ. արդեն իսկ ներկայացված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված նույն փաստաթղթերը:

Իսկ արդեն 09.12.2019թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրեց Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից սահմանված ժամկետում որակավորման փաստաթղթերը հանձնաժողովին ներկայացվելու փաստ, սակայն դրա հետ միաժամանակ արձանագրեց, որ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում կրկին առկա են անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց Ա/Ձ Անդրանիկ

Գասպարյանի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

Այսպիսով, վերոնշված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նախ, 26.11.2019թ. գնահատող հանձնաժողովը ծանուցել է Ա/Ձ-ին՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, որը Ա/Ձ-ի կողմից 28.11.2019թ. կատարվել է և գնահատող հանձնաժողովին է ներկայացվել պահանջված որակավորման փաստաթղթերը: Սակայն անհասկանալի պայմաններում Ա/Ձ-ին գնահատող հանձնաժողովի կողմից 02.12.2019թ. նորից ուղարկվել է ծանուցում՝ նորից որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջով /իբր թե նախորդ անգամ որևէ փաստաթուղթ Ա/Ձ-ի կողմից չի ներկայացվել/, որը Ա/Ձ-ի կողմից նույնպես կատարվում է և 04.12.2019թ. գնահատող հանձնաժողովին է ներկայացվում 28.11.2019թ. արդեն իսկ ուղարկված նույն փաստաթղթերը: Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.12.2019թ. արձանագրում է, որ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից սահմանված ժամկետում ներկայացվեցին որակավորման փաստաթղթերը հանձնաժողովին, սակայն արձանագվեց, որ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում կրկին առկա են անհամապատասխանություններ և որոշվեց Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը:

Այլ կերպ ասած, Ա/Ձ-ի կողմից 28.11.2019թ. որակավորման փաստաթղթերը ներկայացված լինելու պայմաններում, գնահատող հանձնաժողովը այնուամենայնիվ, 02.12.2019թ. կրկին, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի դրույթներով, պահանջել է ներկայացնել որակավորման փաստաթղթերը: Տվյալ դեպքում որպես հրավերի նկատմամբ անհամապատասխանություն՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է փաստաթղթերը ընդհանրապես չներկայացնելու հանգամանքը:

Այնուհետև, երկրորդ անգամ ներկայացված որակավորման փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն տեխնիկական բնութագրերի մասով:

Մինչդեռ եթե գնահատող հանձնաժողովը գնահատեր Ա/Ձ-ի կողմից 28.11.2019թ. ներկայացված որակավորման փաստաթղթերը /այդ թվում նաև տեխնիկական

բնութագիրը/, ապա Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին հնարավորություն կտրվեր Կարգի 47-րդ կետի ուժով կատարել տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 47-րդ կետը կիրառվել է այլ հիմքով՝ իբրև թե առաջին փուլում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացնելու փաստը շտկելու համար, ինչը զրկել է Ա/Ձ-ին Կարգի 47-րդ կետով իրեն վերապահված իրավունքի արդյունավետ իրացումից, տվյալ դեպքում ապրանքների տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորությունից:

Արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցրել է Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև, քանի որ Ա/Ձ-ն որակավորման փաստաթղթերը արդեն իսկ ներկայացրել էր 28.11.2019թ., սակայն գնահատող հանձնաժողովի կողմից 02.12.2019թ. նորից որակավորման փաստաթղթեր պահանջելու արդյունքում /որը ներկայացվել է 04.12.2019թ./ գնահատող հանձնաժողովն արդեն իսկ զրկել է Ա/Ձ-ին 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը խնդրել է Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/198 ընթացակարգի շրջանակներում 20.01.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.12.2019թ. թիվ ՊՆ/02/2833-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված էլեկտրական սարքավորումների գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 17 մասնակիցներ, այդ թվում՝ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի հայտի մերժման արդյունքում, որոշեց ընթացակարգի 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած և բավարար գնահատված մասնակցին՝ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին: 26.11.2019թ. սահմանված կարգով համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվեց առաջին տեղ զբաղեցնող մասնակցին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մասնակցի կողմից չեն ներկայացվել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը 02.12.2019թ. կայացած նիստում որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունը:

Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման փաստաթղթերը: Ուսումնասիրելով մասնակցի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը հանձնաժողովն արձանագրեց, որ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով

ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 21-րդ չափաբաժինների մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 3.1) ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին (մանրամասն տեղեկությունները ներառված են կից ներկայացվող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի հայտը մերժել, միաժամանակ, մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/198 ընթացակարգի շրջանակներում 20.01.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/198 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/198 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին

26.11.2019թ. ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.12.2019թ. թիվ 26/26-1/20766-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.12.2019թ. թիվ ՊՆ/02/2833-2019 գրությունը և կից փաստաթղթերը, Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի գրավոր դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատաս-խանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն

էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանն Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 26.11.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի պահանջները, որոշել է երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցել (02.12.2019թ.) Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ

առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ նույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3.1-ի:

Հրավերով սահմանվել է, որ հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանքի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքի ամբողջական նկարագիրը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև հանձնաժողովի նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 26.11.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2019թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ ամրագրվել է, որ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:

Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է իր «andojur@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջից քաղվածք, համաձայն որի Մասնակցի կողմից դեռևս **28.11.2019թ.** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «**l.tazayan@mil.am**» էլեկտրոնային հասցեին ուղարկվել են հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3.1-ի:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննության ժամանակ առաջացած հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցերը պարզաբանելու և Մասնակցի կողմից ներկայացված ապացույցի հավաստիությունը ստուգելու նպատակով, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 17-րդ կետով, 09.01.2020թ. նշանակել է փորձաքննություն:

Փորձաքննության արդյունքում 16.01.2019թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «andojur@mail.ru» էլեկտրոնային փոստից 28.11.2019թ. ուղարկվել է էլեկտրոնային նամակ «**l.tazayan@mil.am**» էլեկտրոնային հասցեին, որին կցվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ծածկագրով հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հաստատված Մասնակցի կողմից:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից Կարգի 43-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը ստանալուց (26.11.2019թ.) հետո սահմանված ժամկետում **28.11.2019թ.** Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ուղարկել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2019թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ ամրագրվել է, որ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի կողմից հրավերով

նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի պահանջները, ծանուցել է Մասնակցին նշված անհամապատասխանությունը շտկելու համար: Միևնույն ժամանակ Մասնակցի կողմից 04.12.2019թ. ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ և Մասնակցի հայտը մերժել է:

Այսպիսով՝ Հանձնաժողովը գնահատում է ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանքի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները և Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով ծանուցում մասնակցին անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ: Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն կատարել է իր պարտավորությունը և սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղարկել է հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սակայն համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրության Մասնակցի կողմից փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի Մասնակցի կողմից ի սկզբանե ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի գնահատվել և անհամապատասխանությունները չեն արձանագրվել: Հետևաբար Մասնակիցը զրկված է եղել Կարգի 47-րդ կետի համաձայն ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելու հնարավորությունից, քանի որ Մասնակցի կողմից 04.12.2019թ. կրկին ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը գնահատվել է արդեն որպես Կարգի 48-րդ կետի համաձայն ներկայացված շտկում, որից հետո այլևս շտկման հնարավորություն չի գործում:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/6» ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա չեն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2019թ. թիվ 26/26-1/20766-2019 գրությամբ Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**